ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՍԱՀԱԿՅԱՆ ԱՄԱԼՅԱ ԳՐԻՇԱՅԻ**

# ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

**Գիտական ղեկավար՝** մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Հայկ Հմայակի Պետրոսյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Լեմս Սուրենի Ներսիսյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Հովիկ Վլադիմիրի Բլբուլյան**

**Առաջատար կազմակերպություն՝** Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. մայիսի 7-ին, ժամը $12^{00}$–ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ.-ի ապրիլի 6–ին:

**Մանկավարժության** 020 **մասնագիտական**
**խորհրդի գիտական քարտուղար,**
**մանկավարժական գիտությունների**
**թեկնածու, դոցենտ՝** **Թերեզա Յուրիի Ազատյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը**. Տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացման արդի պայմաններում կրթության հիմնական նպատակներից է դարձել ստեղծագործ մտածող, ինքնուրույն, նախաձեռնող և արագ փոփոխվող հասարակական միջավայրին հարմարվող անձի ձևավորումը:

Կրթական ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները, կրթության թվայնացումը, ուսումնական գործընթացում նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների ներդրումը պահանջում են վերանայել ավանդական ուսուցման մոտեցումները և առավել մեծ ուշադրություն դարձնել սովորողի ստեղծագործական կարողությունների զարգացմանը՝ հատկապես կրտսեր դպրոցական տարիքում:

Այս տեսանկյունից կրտսեր դպրոցականների ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման նորագույն միջոցների, ձևերի, մեթոդների, մանկավարժական տեխնոլոգիաների մշակման և ներդրման հիմնախնդիրը խիստ արդիական է:

Չանտեսելով եղած հետազոտությունների գիտատեսական նշանակությունն ու կարևորությունը՝ պետք է նշել, որ դրանցում լիարժեքորեն չեն քննարկված և առաջադրված կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացման միջոցները, մեթոդները, ձևերն ու մանկավարժական տեխնոլոգիաները:

Գործնականում նկատվում են որոշակի հակասություններ.

- մի կողմից ելնելով կրթության արդիականացման ժամանակակից մոտեցումներից՝ բարձր պահանջներ են ներկայացվում անձի ստեղծագործական ընդունակությունների, կարողությունների և ներուժի զարգացման մակարդակի նկատմամբ, որպես նրանց ստեղծագործական գործունեության կարևորագույն բաղադրիչի, մյուս կողմից դեռևս լիարժեքորեն չեն կարևորվում տարրական դպրոցում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման տեխնոլոգիական համալիրի մշակման և դրա արդյունավետության բարձրացման հարցերը՝ որպես նրանց ստեղծագործական ներուժի բացահայտմանը և ստեղծագործական ընդունակությունների ու կարողությունների զարգացմանը էականորեն նպաստող կարևորագույն գործոնի,
- անձի հոգևոր և ստեղծագործական զարգացման վերաբերյալ հասարակության սոցիալական պատվերի («Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Կրթական պետական չափորոշիչը») և հանրակրթական բնագավառում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված մանկավարժական պայմանների ոչ բավարար չափով ապահովման միջև:

Սույն հետազոտության հիմքում դրված են տարրական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում սովորողների ստեղծագործական ներուժի, ընդունակությունների և կարողությունների զարգացման տեխնոլոգիական համալիրի մշակման առաջնահերթ խնդիրները:

Այս հակասությունների և խնդիրների լուծմամբ է պայմանավորված մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

**Հետազոտության նպատակը** կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների և ստեղծագործական առաջադրանքների համալիրի առաջադրումն ու տեսագործնական հիմնավորումն է:

**Հետազոտության օբյեկտը** տարրական դպրոցի ուսուցման գործընթացն է:

**Հետազոտության առարկան** կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների և փոխներգործուն մեթոդների համալիրն է:

**Հետազոտության գիտական վարկածը**. տարրական դպրոցի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումն արդյունավետ կիրականանա, եթե՝

- ուսումնասիրվի և որպես հետազոտության մեթոդաբանական հիմք դիտարկվի անձի ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդրի մշակվածությունը տեսական հետազոտություններում և մանկավարժական պրակտիկայում,
- բացահայտվի և բնութագրվի «ստեղծագործական կարողություններ», «ստեղծագործական ինքնազարգացում», «ստեղծագործական միջավայր», «ստեղծագործական ներուժ» հասկացությունների էությունը՝ մարդասիրական, անձնակողմնորոշված, մշակութաբանական, գործունային,արժեբանական և մանկավարժական այլ մոտեցումների տեսանկյունից,
- մշակվի համաստեղծագործական դասերի, ստեղծագործական առաջադրանքների, վարժությունների այնպիսի համալիր, որը կապահովի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումն ու ինքնազարգացումը,
- մշակվեն կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումն ապահովող ուսուցման նորագույն տեխնոլոգիաների ու փոխներգործուն մեթոդների և դրա լիարժեք գործառնությունը ապահովող մանկավարժական պայմաններ:

Հետազոտության նպատակին և վարկածին համապատասխան՝ առաջադրվել են հետազոտության հետևյալ **խնդիրները**.

1. ուսումնասիրել անձի ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդրի մշակվածության աստիճանը տեսական հետազոտություններում և մանկավարժական պրակտիկայում,
2. սահմանել «ստեղծագործական կարողություններ», «ստեղծագործական ինքնազարգացում», «ստեղծագործական միջավայր», «ստեղծագործական ներուժ» հասկացությունների էությունը մարդասիրական, անձնակողմնորոշված, մշակութաբանական, արժեբանական, գործունային մոտեցումների տեսանկյունից,
3. մշակել կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումն ապահովող ուսուցման նորագույն տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների և ստեղծագործական առաջադրանքների համալիր և դրա լիարժեք գործառնությունը ապահովող մանկավարժական պայմաններ:

**Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել** անձի ստեղծագործական գործունեության, ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական հետազոտությունները, տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները:

Հետազոտության նպատակների և խնդիրների իրականացման համար օգտագործվել են հետևյալ **մեթոդները**՝ հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ տեսական աղբյուրների վերլուծություն և ընդհանրացում, մանկավարժական հետազոտության էմպիրիկ մեթոդներ՝ թեստավորում, անկետավորում, դիտում, զրույց, հարցազրույց, դրանց տվյալների մշակման մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ:

**Հետազոտության գիտական նորույթը**՝

- Հիմնախնդրի վերաբերյալ տեսական և հայեցակարգային մոտեցումների վերլուծության հիման վրա բնութագրվել են «ստեղծագործական կարողություններ», «ստեղծագործական ընդունակություններ», «ստեղծագործական գործունեություն», «ստեղծագործական ներուժ» հասկացությունները, վերաձևակերպվել է «ստեղծագործական կարողություն» հասկացությունը:

- Մշակվել, տեսականորեն հիմնավորվել և տարրական դպրոցի ուսուցման գործընթացում ներդրվել են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետության ապահովման նորագույն տեխնոլոգիաների և փոխներգործուն մեթոդների, համաստեղծագործական դասերի, ստեղծագործական առաջադրանքների, վարժությունների համալիր, և դրա արդյունավետ գործառնությունն ապահովող մանկավարժական պայմաններ:
- Բացահայտվել և հիմնավորվել է ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման գործում ուսուցչի և սովորողի համաստեղծագործական գործունեության արդյունավետությունը:

**Հետազոտության տեսական նշանակությունը** պայմանավորված է տարրական դպրոցի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետության ապահովման նորագույն տեխնոլոգիաների և փոխներգործուն մեթոդների կիրառման վերաբերյալ նոր մոտեցումներով, համաստեղծագործական դասերի, ստեղծագործական առաջադրանքների, վարժությունների համալիրի մշակմամբ, որը կհարստացնի տարրական կրթության մանկավարժությունը տեսական նոր դրույթներով:

Բնութագրվել են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացվածության մակարդակները, տեսականորեն հիմնավորվել են առաջարկված ուսուցման նորագույն տեխնոլոգիաների և փոխներգործուն արդյունավետ գործառնությունն ապահովող մանկավարժական պայմանները:

Մանկավարժության տեսության մեջ հիմնավորվել է անձի ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդիրը հիմնված՝ արժեբանական կողմնորոշումների և ռեֆլեքսիվ գործունեության վրա, որը կարող է լուծվել ուսումնական գործընթացում ուսուցչի և աշակերտի համաստեղծագործական գործունեության ընթացքում:

**Հետազոտության գործնական նշանակությունը.**

1. Մշակվել, փորձարարության ընթացքում ներդրվել է ստեղծագործական ուղղվածություն ունեցող դասերի, ուսումնական առաջադրանքների, վարժությունների համալիրը, որն ապահովում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումն ու ինքնազարգացումը ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում:
2. Հանրակրթական դպրոցի պրակտիկայում կիրառվել է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման տեխնոլոգիական համալիրը:
3. Հետազոտության նյութերը կարող են կիրառվել ուսումնական ձեռնարկների, դասագրքերի ստեղծման, գործնական առաջադրանքների կազմման գործընթացում, ինչպես նաև տարրական դպրոցի ուսուցիչների գործունեության ընթացքում, ուսուցիչների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներում՝ նրանց հոգեբանամանկավարժական և մեթոդական բազայի հարստացման նպատակով:

**Հետազոտությունն իրականացել է երեք փուլով.**

**Առաջին փուլ** (2013-2015թթ.). այս փուլում ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական գրականությունը, տեսական հայեցակարգերը, կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող ուսուցման փոխներգործուն մեթոդներն ու տեխնոլոգիաները: Տարրական դպրոցի ծրագրերն ու չափորոշիչները, ձևակերպվել են հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական վարկածը:

Բացահայտվել է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների ձևավորվածության նախնական մակարդակը:

**Երկրորդ փուլում** (2016-2020թթ.) շարունակվել է սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման խնդրի տեսական վերլուծությունը անձնակողմնորոշիչ, մշակութաբանական, արժեբանական և այլ մոտեցումների հիման վրա, մշակվել է ստեղծագործական բնույթ ունեցող ուսումնական խնդիրների և առաջադրանքների համալիր: Այս փուլում իրականացած հետազոտության ընթացքում գործնականում ներդրվել են առաջարկված ուսուցման փոխներգործուն մեթոդների և նորագույն տեխնոլոգիաների համալիրը, որի ընթացքում հետևել ենք կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման շարժընթացին (դինամիկային): Իրականացվել է նորագույն տեխնոլոգիաների և մանկավարժական պայմանների ներգործության արդյունքների վերլուծություն, կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման շարժընթացի(դինամիկայի) վերջնական արդյունքների արձանագրում:

**Երրորդ փուլում** (2021-2025 թթ.) ամփոփվել, ընդհանրացվել են հետազոտության ընթացքում ստացված տվյալները: Ձևակերպվել են հետազոտության եզրակացությունները, շարադրվել է ատենախոսությունը:

**Հետազոտության բազա են** հանդիսացել Շիրակի մարզի Ձորակապ գյուղի միջնակարգ դպրոցը, Երևանի թիվ 104 հիմնական դպրոցը:

**Հետազոտությունն** իրականացել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնում և հետազոտական բազա հանդիսացած հանրակրթական դպրոցներում, ատենախոսության թեմայով հրատարակ-ված 9 գիտական հոդվածներում:

Հետազոտության արդյունքների **հավաստիությունն ու արժանահավատությունը** երաշխավորվում են հոգեբանամանկավարժական գիտական արդի հայեցակարգերի խոր ու համակողմանի վերլուծությամբ, առաջադրված հիմնախնդրի լուծման ուղղությամբ

հետազոտության մեթոդների համալիրի կիրառմամբ, իրականացված հետազոտության փուլերի տրամաբանական հաջորդականությամբ, ստացված տվյալների որակական և քանակական համակողմանի վերլուծությամբ, մաթեմատիկական մշակման ճշգրտությամբ և ատենախոսության հեղինակի անձնական ներդրումով:

**Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները**.

1.Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը նրա ստեղծագործական ընդունակությունների դրսևորման և ստեղծագործական ներուժի բացահայտման պայման է, որը ուղեկցվում է ստեղծագործական գործունեության նկատմամբ գիտակցված արժեքային վերաբերմունքով ու դիրքորոշմամբ: Այն արտահայտվում է ստեղծագործական գործունեության պահանջմունքների և դրդապատճառների, ռեֆլեքսիվ կարողության ձևավորվածությամբ:

2.Տարրական դպրոցի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը արդյունավետ է իրականանում ուսուցչի և աշակերտների՝ համաստեղծագործական գործունեության իականացմամբ, ստեղծագործական բնույթ ունեցող դասերի, առաջադրանքների, վարժությունների, ուսուցման նոր ձևերի, միջոցների նպատակային կիրառմամբ:

3.Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացվածության չափանիշները բնութագրում են անձի ստեղծագործական մտածողության և ստեղծագործական ներուժի զարգացվածության մակարդակները, իմացական-ճանաչողական, արժեքային-գնահատողական, վարքային-գործունային ոլորտները:

4.Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացմանը նպաստում են ուսուցման գործընթացում նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների կիրառումը, կրթական զարգացնող ստեղծագործական միջավայրի ձևավորումը, ստեղծագործական կարողությունների

զարգացման վրա ազդող գործոնների հաշվառումը, դրանց զարգացվածության մակարդակի չափանիշների որոշումը, այդ գործընթացի շարունակական մշտադիտարկումը:

5.Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման գործընթացում կարևորվում են համագործակցային, խաղային, նախագծային, պրոբլեմային, զարգացնող ուսումնառությունը և ռեֆլեքսիան, որոնք էականորեն նպաստում են ստեղծագործական ներուժ ունեցող երեխաների ստեղծագործական, գեղարվեստական, նախագծային մտածողության և երևակայության արդյունավետ զարգացմանը:

**Ատենախոսության կառուցվածքը**: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Հետազոտությունը կազմում է 151 համակարգչային էջ: Այն ներառում է 9 աղյուսակ, 2 տրամագիր:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, առաջադրված է գիտական վարկածը, ներկայացված են գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ձևակերպված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության իրականացման փուլերը, ներկայացվել է աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

**Ատենախոսության առաջին գլուխը՝** «**Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդրի գիտատեսական հիմնավորումը**» բաղկացած է 3 ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝**«**Անձի ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդրի դիտարկումը փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական հետազոտություններում**» դիտարկվել են անձի ստեղծագործական կարողությունների զարգացման խնդիրը գիտական գրականության մեջ և բնութագրվել են «**ստեղծագործական կարողություններ**» «**ստեղծագործություն**», «**ստեղծագործական ընդունակություններ**», «**ստեղծագործական մտածողություն**», «**ստեղծագործական կարողություններ**» **հասկացությունները**:

**Ստեղծագործական կարողությունները** զարգանում են ստեղծագործական բնույթ ունեցող ուսումնական գործունեության և խնդիրների լուծման միջոցով, որոնք զարգացնում են ստեղծագործական մտածողությունը և նպաստում են ստեղծագործական ընդունակությունների դրսևորմանը ստեղծագործական գործունեության ընթացքում: Ստեղծագործականն է այն միջավայրը, որում դրսևորվում են անձի ստեղծագործական ներուժը, մտածողությունը, ընդունակությունները, հոգևոր-բարոյական արժեքները:

Սահմանվել է «**ստեղծագործական կարողություններ**» հասկացության էությունը. **ստեղծագործական կարողությունները ստեղծագործական բնույթի առաջադրանք, գործողություն կատարելու, դրա արդյունքում որևէ բան ստեղծելու, շինելու, կառուցելու կրտսեր դպրոցականի ունակությունն է, ստեղծագործական ինքնազարգացման և ինքնիրացման հնարավորությունը, ստեղծագործական գործունեություն իրականացնելու պահանջմունքն ու պատրաստակամությունը, որոնք դրսևորվում են կոնկրետ գործունեության կատարման ընթացքում**:

**Երկրորդ ենթագլխում՝** «**Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման վրա ազդող գործոնները**» **խորագրով** ներկայացված, բնութագրված են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման վրա ազդող գործոնները:

**Երրորդ ենթագլխում՝ «Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացման առաջադրված նորագույն տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների, առաջադրանքների, մանկավարժական պայմանների բնութագիրը»**, դիտարկված և հիմնավորված են մեր կողմից առաջադրված կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացմանը նպաստող տեխնոլոգիաները, փոխներգործուն մեթոդները, ստեղծագործական և տարամակարդակ տարբերակված առաջադրանքները, մանկավարժական պայմանները:

Ներկայացված են դասերի պլանների և առաջադրանքների նմուշօրինակներ՝ ժամանակակից տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների կիրառմամբ, ստեղծագործական առաջադրանքների, վարժությունների օրինակներ:

Հետազոտական խմբերում հանձնարարվել են ստեղծագործական աշխատանք տեքստերի շուրջ:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով մենք առավելագույնս օգտվել ենք մայրենիի և «Արվեստ» ուսումնական բնագավառը ներկայացնող առարկաների հնարավորություններից՝ **երգի** (ստեղծագործության բովանդակությանը համապատասխան երաժշտության ունկնդրում, ստեղծագործության բեմականացման երաժշտական ձևավորում), **նկարչության և տեխնոլոգիայի** (նկարազարդում, ապլիկացիա, ծեփագործություն, ասեղնագործություն, մասնակցություն ցուցահանդեսների), ընդ որում, տեքստերի շուրջ աշխատանքներում մեծ ուշադրություն է հատկացվել ինտեգրվող առարկաներին կամ միջառարկայական կապերի հմուտ կիրառմանը:

Բնութագրված են այն մանկավարժական պայմանները, որոնց ապահովումը արդյունավետ է դարձնում հետազոտվող գործընթացը:

**Ատենախոսության երկրորդ՝ «Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության հիմնավորմանն ուղղված հետազոտության արդյունքների վերլուծությունը» բաղկացած է** 3 **ենթագլխից:**

**Առաջին «Առաջարկվող նորագույն տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների, ստեղծագործական առաջադրանքների և մանկավարժական պայմանների արդյունավետության հիմնավորումը» ենթագլխում** տրված է առաջարկվող ժամանակակից տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների, ստեղծագործական առաջադրանքների և մանկավարժական պայմանների արդյունավետության հետազոտական հիմնավորումը:

Հետազոտական աշխատանքներն ընթացել են կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացի կազմակերպման մի շարք ուղղություններով, որոնցից յուրաքանչյուրը ներառում է սովորողների ուսումնաստեղծագործական և ռեֆլեքսիվ գործունեությունը:

Հետազոտության խնդիրների իրականացման շրջանակներում կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության արդյունավետությունը ապահովելու նպատակով **առաջարկվող փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների համալիրը ներառել է՝ փոխներգործուն մեթոդներ** «Խճանկար», «Ջիգսո», «Մտագրոհ», «Երեք բանալի և մեկ կողպեք», «Հինգրոպեանոց ազատ շարադրանք», «Համագործակցային ընթերցանություն և շարադրություն», «Աշխատանք կենտրոններով», «Շրջագայություն պատկերասրահում», «Խմբային հետազոտություն», «Սովորողների թիմային առաջադիմություն», «Դերային խաղեր», «Խորանարդում», «Շրջանաձև հարցում», «T-աձև աղյուսակ», «Ձնագնդի», «Քառաբաժան աղյուսակ», «Կրկնակի գրառումների օրագիր», «Նախագծերի մեթոդ», «Իրավիճակի նկարագրություն», «Ուղղորդված ընթերցանություն» և այլն:

**ժամանակակից տեխնոլոգիաներ՝** համագործակցային, նախագծային, տարբերակված, խաղային, պրոբլեմային, զարգացնող:

Ներկայացված են նաև առաջարկվող ստեղծագործական դասերի, վարժությունների և հեղինակային տարբերակված առաջադրանքների նմուշօրինակները՝ ուղղված կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը և հաշվի են առնված յուրաքանչյուր սովորողների ուսումնական հնարավորություններն ու կարողությունները :

Ներքոբերյալ ներկայացված «Կերպարվեստ», «Մաթեմատիկա», **«Մայրենի»** առարկաներից ստեղծագործական առաջադրանքների նմուշօրինակներ;

**Կերպարվեստից.**

**Ստեղծիր երևակայական պատկեր՝** «կախարդական աշխարհ», **այդ պատկերի շուրջ հորինիր հեքիաթ, ներկայացրու աշխատանքդ՝ պատմելով հորինածդ հեքիաթը**:

**Մաթեմատիկա առարկայից.**

**Տրված թվերով կազմիր քառանիշ թվերի բոլոր հնարավոր տարբերակները, ապա դասավորիր աճման կարգով, նվազման կարգով, գտիր կազմածդ թվերից ամենամեծ և ամենափոքր թվերի տարբերությունն ու գումարը՝** 5, 8, 7, 2:

Կիրառվել են նաև **ստեղծագործական խաղեր**, որոնք հնարում էին երեխաները: Դրանք նպաստում են կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների (երգելու, նկարելու, ծեփելու), տրամաբանության, խոսքի, շարժումների, ինքնուրույնության, մտածողության տարբեր տեսակների, հիշողության, երևակայության, ուշադրության, հետաքրքրությունների զարգացմանը:

**Ստեղծագործական առաջադրանք** «Մայրենի» **առարկայից.** 2-րդ դասարան

«**Վայրի տանձենու տակ» դասը վարժ կարդալ, կատարել բառային աշխատանք, նորածանոթ բառերով կազմել նախադասություններ**:

**Որպես ստեղծագործական աշխատանք հանձնարարել՝ ավարտի՛ր պատմությունը՝ հորինելով ուրիշ վերջաբան**:

**Ստեղծագործական առաջադրանք**

Գործողությունների զարգացման տարբեր փուլերի համադրում հերոսների վարքի արտաքին դրսևորումներին, որը բացահայտում է հերոսների արժեքային կողմնորոշումների համակարգը. **Ինչպե՞ս է հերոսը իրեն դրսևորում տարբեր իրավիճակներում: Անկե՞ղծ է, արդյոք, նա իր մտորումներում և արարքներում: Կարո՞ղ եք նրան ավելի նախընտրելի տարբերակ առաջարկել**:

**Ստեղծագործական առաջադրանք**

Հերոսների արտաքինը նկարագրող և ներաշխարհն արտահայտող լեզվական միջոցների վերլուծություն. **Ի՞նչ բառերով ու արտահայտչամիջոցներով է հեղինակը նկարագրում հերոսների արարքները, հույզերը, տրամադրությունը, խոսքը: Դրանք փոխարինե՛ք այլ բառերով ու միջոցներով:**

**Ստեղծագործական ներուժի բացահայտմանն ուղղված առաջադրանքներ**

Ստեղծագործության մեջ գործողությունների զարգացման, ժամանակագրական, տրամաբանական, պատճառահետևանքային կապերի ու հաջորդականության ընկալում. **Ի՞նչ է տեղի ունեցել: Ինչու՞ գործողությունները այդ հունով ընթացան:Համաձա՞յն եք հեղինակի մոտեցմանը, գործողությունների նմանօրինակ ընթացքին և ավարտին: Ի՞նչ սկիզբ կամ ավարտ կառաջարկեիք:**

**Ստեղծագործական կարողությունների զարգացման առումով տարրական դպրոցում կիրառվող վարժություններից մենք կարևորում ենք նկարների շուրջ աշխատանքները**:

Հետազոտության ընթացքում խմբերում անցկացված ընթերցանության ժամերի, խմբակների, լրացուցիչ պարապմունքների, արտադասարանային ընթերցանության

ընթացքում կիրառվել են լրացուցիչ նյութեր, որոնք ունեին ընդգծված ստեղծագործական ներուժ, տեղեկատվական-ճանաչողական և հուզական բովանդակություն:

Մեր կողմից մշակված և առաջադրված ստեղծագործական առաջադրանքների ու վարժությունների կատարումը եզրափակվել է կրտսեր դպրոցականների համար նշանակալի և մատչելի որևէ արդյունավետ աշխատանքով, միջոցառմամբ և դրանց ցուցադրմամբ:

Հետազոտության ընթացքում որոշակիացվել են կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության արդյունքի գնահատման որակական ցուցանիշները:

**Երկրորդ ենթագլխում՝ «Հետազոտության ընթացքում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակների հայտորոշումը (դիագնոստիկան)»**, ներկայացված են հետազոտության ընթացքում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակների հայտորոշումը (դիագնոստիկան) և չափանիշները, տրված է դրանց հիմնավորումը, հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման փուլերը:

Բնութագրված են ստեղծագործական կարողությունների կառուցվածքային բաղադրիչները, ընդհանուր ուսումնական կարողությունների ձևավորվածության մակարդակի հայտորոշման հարցաթերթիկի բովանդակությունը և կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակների բնութագրիչները, որոնք ներկայացված են աղյուսակների տեսքով:

Քանի որ հետազոտության ընթացքում մենք հիմնական շեշտը դրել ենք անձի ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակների ուսումնասիրության վրա, ապա հետազոտությունն իրականացվել է՝ ըստ մեր կողմից մշակված և առաջադրված չափանիշների, որոնք բնութագրում են նշված հատկանիշները:

Մեր հետազոտության շրջանակներում որպես կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման չափանիշներ են դիտարկվում՝ նրանց ստեղծագործական ընդունակությունների, մտածողության, երևակայության զարգացվածությունն ու ստեղծագործական գործունեության պահանջմունքների ու դրդապատճառների, ռեֆլեքսիայի ունակության ձևավորվածությունը:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակը որոշող հիմնական չափանիշները սահմանելիս մենք հիմք ենք ընդունում այն, որ ստեղծագործական կարողությունները հիմնականում ձևավորվում և դրսևորվում են ուսումնաստեղծագործական գործունեության ընթացքում, ուստի նրա կառուցվածքային բաղադրիչները մենք դիտարկում ենք որպես հիմնական չափանիշներ: Դրանց թվում են՝ **ստեղծագործական մտածողության զարգացածությունը**, **երևակայությունը**, **ուշադրության կայունությունը**, **հնարամտությունը**, **ներըմբռնման ուժը**, **իրերի և երևույթների խորքը թափանցելու, ներքին կապերը բացահայտելու ձգտումը**, **գեղեցիկի զգացողությունը**, **գնահատողականությունը**:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակը հետազոտության տարբեր փուլերում, ըստ սահմանված չափանիշների, բացահայտելու համար իրականացվել է հարցում: Յուրաքանչյուր հարց պարունակում է երեք պատասխան. սովորողը պետք է ընդգծի իր նախընտրած պատասխանը:

Ներկայացված են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակների՝ ցածր, միջին, բարձր բնութագրիչները:

**Երրորդ ենթագլխում՝ «Կիրառված մանկավարժական տեխնոլոգիաների և փոխներգործուն մեթոդների արդյունավետության հիմնավորումը»**, բնութագրված են հետազոտության փուլերի նպատակները, խնդիրները և տրված է կիրառված մանկավարժական տեխնոլոգիաների և փոխներգործուն մեթոդների արդյունավետության հիմնավորումը:

Հետազոտությունն իրականացվել է 3 փուլով:

Հետազոտության առաջին փուլում որոշակիացվել են մանկավարժական այն տեխնոլոգիաներն ու փոխներգործուն մեթոդները, որոնք ապահովում են դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը, որոշվել են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման չափանիշները:

Հետազոտության երկրորդ փուլում ստուգվել են մանկավարժական այն տեխնոլոգիաների և փոխներգործուն մեթոդների արդյունավետությունը, որոնք ապահովել են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացումը տարրական դպրոցի ուսումնական գործընթացում:

Սովորողների ստեղծագործական կարողությունների ձևավորվածության նախնական մակարդակը հայտորոշելու համար հետազոտության մեր կողմից անցկացվել է հարցում հետազոտությանը մասնակցող սովորողների շրջանում:

Հետազոտական աշխատանքներն իրականացվել են Շիրակի մարզի Ձորակապ գյուղի միջնակարգ դպրոցում, Երևանի թիվ 104 հիմնական դպրոցում:

Հարցաթերթիկում ընդգրկված հարցերը թույլ են տալիս բացահայտել դպրոցական-ների ուսումնական գործունեության ստեղծագործական ուղղվածությունը, նորի զգացողություն: Յուրաքանչյուր միտք ունի պատասխանի հնարավոր տարբերակներ, որոնք գնահատվում են համապատասխան միավորներով (**աղյուսակ** 1):

**Աղյուսակ** 1

| Հարցեր և հնարավոր պատասխաններ | | Միավորներ |
|---|---|---|
| 1. | Առաջարկված առաջադրանքներից կընտրեմ<br>ա) Հեշտը<br>բ) Դժվարը<br>գ) Հետաքրքիրը և առանձնահատուկը | <br>1<br>2<br>3 |
| 2. | Շարադրություն գրելիս<br>ա) Մտքերս պարզ բառերով են արտահայտում<br>բ) Օգտագործում եմ անցած դասերից ծանոթ, սովորած բառեր և արտահայտություններ<br>գ) Օգտագործում եմ գեղարվեստական բառեր, նոր ու ինքնատիպ մտքեր, հորինում եմ հետաքրքիր ու ինքնատիպ ավարտ | 1<br>2<br>3 |
| 3. | Եթե նկարիչ լինեի, կնկարեի<br>ա) Ինձ շրջապատող առարկաները և ընկերներիս<br>բ) Բնության գեղեցիկ տեսարան<br>գ) Մի հեքիաթային, երևակայական գունագեղ աշխարհ | 1<br>2<br>3 |
| 4. | Ազատ ժամերին ավելի շատ<br>ա) ընկերներիս հետ կզբոսնեի<br>բ) կարդացած գրքի բովանդակությունը կպատմեի<br>գ) բանաստեղծություններ կգրեի | 1<br>2<br>3 |
| 5. | Խաղերի ժամանակ<br>ա) կնախընտրեի խաղալ խմբով<br>բ) կխաղայի այնպիսի խաղ, որտեղ իմ ուրույն դերն ունենայի<br>գ) կընտրեի անսպասելի իրավիճակներով լի խաղ | 1<br>2<br>3 |

| | | |
|---|---|---|
| 6. | Ամառային արձակուրդներին<br>ա) ծնողներիս հետ կմեկնեի հանգստյան տուն<br>բ) ուղևորության կմեկնեի աշխարհի շուրջը<br>գ) կմեկնեի գիտարշավի նոր ու խորհրդավոր կղզում | 1<br>2<br>3 |
| 7. | Աշխատանքի ուսուցման ժամերին<br>ա) կաշխատեի ուսուցչի առաջարկած միջոցներով<br>բ) կստեղծեի աշխատանքներ տրված նմուշների օրինակով<br>գ) կստեղծեի առանձնահատուկ ու ինքնատիպ մի բան | 1<br>2<br>3 |
| 8. | Եթե ես ճանապարհորդեի, ապա<br>ա) կմեկնեի գյուղ՝ տատիկիս և պապիկիս տուն<br>բ) կընտրեի նոր ու հետաքրքիր երթուղի Հայաստանի տեսարժան վայրերով<br>գ) կճանապարհորդեի աշխարհի շուրջը | 1<br>2<br>3 |

Ստացված հետազոտության արդյունքների մաթեմատիկական, վիճակագրական վերլուծությունը հավաստում է, որ կրտսեր դպրոցականները հետազոտության սկզբում գրեթե էականորեն չտարբերվող արդյունքներ են ցուցաբերել: Սկզբնական փուլում երեխաների ցուցանիշները հիմնականում «ցածր» և «միջին» մակարդակում էին, ինչը վկայում է, որ ուսուցման գործընթացում ստեղծագործական կարողությունների զարգացման համար նպատակաուղղված մանկավարժական պայմաններ քիչ էին կիրառվել:

Ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակը հայտորոշող հետազոտությանը մասնակցած կրտսեր դպրոցականների հարցման արդյունքները արտացոլված են թիվ 2 աղյուսակում և թիվ 1 տրամագրում

**Աղյուսակ** 2

**Ստեղծագործական կարողությունների զարգացման ելակետային մակարդակները**

| Ծվով 100 սովորող | Ստեղծագործական կարողությունների զարգացման ելակետային մակարդակները | | |
|---|---|---|---|
| | Ցածր (1 միավոր) | Միջին (2 միավոր) | Բարձր (3 միավոր) |
| Հետազոտվողների թիվը | 24 | 44 | 32 |

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման գործընթացի արդյունավետ կազմակերպումն ապահովող մանկավարժական տեխնոլոգիաները, փոխներգործուն մեթոդներն ու մանկավարժական պայմանները նախնական տվյալների բացահատման ընթացքում չեն կիրառվել, դրանք կիրառվել են հետազոտության առաջին և երկրորդ փուլերում, որոնցից հետո նորից իրականացվել է հարցում ուղղված կրտսեր դպրոցականներին:




**Տրամագիր** 1. **Ստեղծագործական կարողությունների զարգացման ելակետային մակարդակները**:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման նախնական մակարդակի հայտորոշման հիման վրա ստացված տվյալների տեսական իմաստավորումը թույլ տվեց եզրակացնել, որ՝

- հետազոտվող կրտսեր դպրոցականները անձի ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշները էականորեն չեն տարբերվում, գտնվում են հիմնականում զարգացման ցածր և միջին մակարդակներում, որը վկայում է ուսուցման գործընթացում դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված ոչ նպատակասլաց մանկավարժական պայմանների մասին,
